

# ԹԻՎ 13 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«26» հունվարի 2024թ.  
ք.Արարատ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N43

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ «ԻՄ  
ՀՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Արարատ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի «16»-ի N 0104 գրությունը և Արարատ համայնքի ավագանու 2024թվականի հունվարի 16-ի արձանագրությունը « Արարատ համայնքի ավագանու անդամ Հայկ Անուշավանի Հայկյանի՝ ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին»՝ թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Մ Է .

Արարատ համայնքի ավագանու «Իմ Հզոր Համայնք» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Իմ Հզոր Համայնք» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Հովհաննես Խոսրովի Հարությունյանին:

Հանձնաժողովի նախագահ՝  Հրաչյա Ստեփանյան

Հանձնաժողովի տեղակալ՝  Արտակ Զաքարյան

Հանձնաժողովի քարտուղար՝  Աննա Մովսիսյան

Անդամներ՝  Լիլիթ Քոչարյան

 Արսեն Պողոսյան

 Անուշեղ Ղազարյան

 Արմինե Մալխասյան

